ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 հունիսի 2025 թվականի թիվ 1131-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Սևան համայնքի ավագանու՝ 12.02.2025 թվականի N 13-Լ որոշման պահանջները, հաշվի առնելով բնակիչների կողմից ստացված սոցիալական աջակցության դիմումները, դիմումների հիման վրա հանձնաժողովի կողմից իրականացված կարիքների գնահատումը՝ **որոշում եմ.**

1. Կարիքների գնահատման արդյունքների հիման վրա Սևան համայնքի սոցիալապես անապահով բնակիչներին ընդգրկել աջակցության տրամադրման ծրագրում:
2. Սոցիալական աջակցությունը կազմակերպել սննդային փաթեթների տրամադրման միջոցով (յուրաքանչյուր փաթեթի արժեքը՝ 20.000 ՀՀ դրամ):
3. Համայնքային բյուջեից սոցիալական աջակցության ծրագրի իրականացման համար հատկացնել 5 մլն. դրամ:
4. Սննդային փաթեթների ձեռքբերումը կազմակերպել գնանշման հարցման ընթացակարգով:
5. Սննդային փաթեթների տրամադրումը կազմակերպել քարտերի միջոցով:
6. Հանձնաժողովին՝ գործընթացի ավարտից հետո ներկայացնել սոցիալական աջակցության ծրագրից օգտված բնակիչների վերաբերյալ տեղեկատվություն:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 05
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 հունիսի 2025 թվականի թիվ 1132-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Ալեքսան Թովմասյանի դիմումը՝ Ծովագյուղ համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի՝ 14.04.1991թ. N4 նիստի որոշմամբ՝ Ալեքսան, Սիլվա և Սպարտակ Թովմասյաններին սեփականաշնորհված 0.146հա մակերեսով հողատարածքի /ծածկագիր՝ 05-049-0037-0001/ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ.Ծովագյուղ հասցեում գտնվող 0.146հա մակերեսով հողատարածքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Ծովագյուղ, 22-րդ փողոց, 2-րդ նրբանցք թիվ 13 հողամաս հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 05
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 հունիսի 2025 թվականի թիվ 1133-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 15.01.2024Թ. Ն 125-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝**որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 15.01.2024թ. «Հասցե տրամադրելու մասին» 125-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) «Սևան համայնք, գ. Չկալովկա, 12-րդ փողոց թիվ 26 հողամաս » բառերի փոխարեն կարդալ «Սևան համայնք, գ. Չկալովկա, 12-րդ փողոց թիվ 21 հողամաս» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 05
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 հունիսի 2025 թվականի թիվ 1134-Ա

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45 -րդ հոդվածի 1-ին մասի 8 -րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 12-րդ հոդվածի 7-րդ կետի, Սևան համայնքի ավագանու՝ 19.11.2024թ. N 146-Ն որոշման 1-ին կետով սահմանված 1 հավելվածի 12-րդ կետի դ) ենթակետի, հիմք ընդունելով «Անժելա Սիմոնյան» ԱՁ -ի տնօրենի հայտը՝ **որոշում եմ.**

1. «Անժելա Սիմոնյան» ԱՁ-ին / գործունեությունը՝ ք. Սևան, Հարսնաքար համալիրի հարևանությամբ հասցե/ տրամադրել 01.06.2025-30.06.2025թթ. ժամանակահատվածի համար՝ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության՝ Սևանի համայնքի բյուջեի 900165101503 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 6750 դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 05
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 հունիսի 2025 թվականի թիվ 1135-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Նվեր Գևորգյանի դիմումը՝ համատեղ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, գ. Լճաշեն հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 1782781, տրված՝ 20.06.2003թ. /համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Լճաշեն հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Լճաշեն, 1-ին փողոց, 3-րդ փակուղի թիվ 2 հողամաս հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 05
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 հունիսի 2025 թվականի թիվ 1136-Ա

ԽԱՆՈՒԹ ԲԱՑՎԱԾՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՆԵՐՔԻՆ ՁԵՎԱՓՈԽՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 25, 27, 32 կետերով, հիմք ընդունելով քաղ. Ծաղիկ Ենոքյանի լիազոր անձ Աղասի Առաքելյանի դիմումը՝ ք. Սևան, Շահումյան փողոց թիվ 33 / 1-4 հասցեում գտնվող խանութ բացվածքում կատարված ներքին ձևափոխման աշխատանքներն օրինականացնելու մասին, հաշվի առնելով, որ առևտրի սրահը կառուցված է ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չունեցող հողատարածքի վրա, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, ինչպես նաև առկա է շենքի սեփականատերերի համաձայնությունը, **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով Ծաղիկ Հայկազի Ենոքյանին պատկանող, ք. Սևան, Շահումյան փողոց թիվ 33 / 1-4 հասցեում գտնվող 55.65քմ մակերեսով խանութ բացվածքի կատարված ներքին ձևափոխման աշխատանքները ճանաչել օրինական:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 05
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 հունիսի 2025 թվականի թիվ 1137-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Կարեն Մարգարյանի դիմումը՝ համատեղ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, գ. Զովաբեր հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 2396399, տրված՝ 01.08.2008թ. / համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Զովաբեր հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Զովաբեր, 9-րդ փողոց թիվ 29 բնակելի տուն հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 05
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 հունիսի 2025 թվականի թիվ 1138-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԳՈՌ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով քաղաքացի Գոռ Մաթևոսյանին կառուցապատման իրավունքով պատկանող հողատարածքում տեղադրված շինությունների առկայության փաստը պարզեցի. «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ–ի, և Սևանի ՆԳ բաժնի աշխատակիցների կողմից կազմված արձանագրության համաձայն՝ քաղաքացի Գոռ Մաթևոսյանին կառուցապատման իրավունքով պատկանող հողատարածքում /պայմանագիր կնքված 01.12.2006թ./ առկա են շինություններ: Փաստը արձանագրվել է նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի դատախազի 12.04.2025 թվականի և 23.04.2025 թվականի գրություններով: Քաղաքացուն սահմանված կարգով ուղարկվել է երեք ծանուցում, սակայն նա չի ներկայացել Սևանի համայնքապետարան և չի տվել պարզաբանումներ: Նյութերի լրացուցիչ ուսումնասիրությունով պարզվեց, որ քաղաքացի Գոռ Մաթևոսյանը, խախտելով ՀՀ կառավարության 24.09.2001 թվականի 896-Ն, ՀՀ կառավարության 15.03.2019 թվականի 596-Ն որոշումների, ՀՀ «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածի պահանջները, առանց շինարարության թույտվության հողատարածքում իրականացրել է շինարարություն: Համաձայն ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի 1-ին կետի պահանջների այդ շինությունները հանդիսանում են ինքնակամ շինություններ: Նույն հոդվածի պահանջների՝ այդ շինությունները տեղադրված են / կառուցված են/ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին պատկանող հողատարածքում և օրինականացման ենթակա չեն: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, 42–րդ հոդվածի 2-րդ մասի, 1-ին կետի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Պահանջել քաղաքացի Գոռ Մաթևոսյանից /ք. Երևան, Ծերեթելի փ. 54/4 հասցե/ապամոնտաժելու (քանդելու) հողատարածքում ինքնակամ տեղադրված /կառուցված/ շինությունները:
2. Պահանջել քաղաքացուց տարածքի կառուցապատումը իրականացնել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:
3. Սույն որոշման 1-ին կետի պահանջները չկատարելու դեպքում՝ հարցը լուծել օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով երկու ամսվա ընթացքում:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում առձեռն կամ օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 05
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 հունիսի 2025 թվականի թիվ 1139-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Գագիկ Համբարձումյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի Գագիկ Համբարձումյանին պատկանող, Վարսեր համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի՝ 22.04.1991թ. N 7 նիստի որոշմամբ՝ Գագիկ և Բալաբեկ Համբարձումյաններին սեփականաշնորհված 2200քմ մակերեսով հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին, ինչպես նաև նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ըստ օրենքի ժառանգության վկայագրի Գագիկ Համբարձումյանին պատկանող, Վարսեր համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի՝ 14.04.1991թ. N 7 նիստի որոշմամբ Վարսեր համայնքում անհատական բնակելի տան կառուցման համար Գագիկ Անդրեազի Համբարձումյանին /ծնված՝29.07.1972թ./, Բալաբեկ Անդրեասի Համբարձումյանին /ծնված 09.04.1968թ./ անհատական բնակելի տան կառուցման համար սեփականաշնորհված 2200քմ մակերեսով հողատարածքին կից գտնվող 76.4քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ ճանաչել Գագիկ և Բալաբեկ Համբարձումյանների սեփական գույքը:
2. Գագիկ և Բալաբեկ Համբարձումյաններին պատկանող 2276.4քմ մակերեսով հողատարածքում 1959-1962թթ. կառուցված 240.45քմ մակերեսով կիսանկուղի և բնակելի տան /ներքին մակերեսը՝ 217.0քմ/, 15.75քմ մակերեսով խորդանոցի /ներքին մակերեսը՝ 12.0քմ/, 50.0քմ մակերեսով անասնաշենքի /ներքին մակերեսը՝ 38.64քմ/, 30.0քմ մակերեսով խոտանոցի /ներքին մակերեսը՝22.72քմ/ ճանաչել Գագիկ Անդրեազի Համբարձումյանի և Բալաբեկ Անդրեասի Համբարձումյանի սեփական գույքը՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Վարսեր, 1-ին փողոց, 10-րդ փակուղի թիվ 5 բնակելի տուն հասցե:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 05
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 հունիսի 2025 թվականի թիվ 1140-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 15.05.2025Թ. N 979-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝ 15.05.2025թ. «Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու մասին» N979-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 05
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

05 հունիսի 2025 թվականի թիվ 1141-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով քաղ. Լիանա Մարգարյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Գ. Լուսավորչի փողոց թիվ 26 / 8 հասցեում գտնվող ավտոտնակի՝ օգտագործման իրավունքով զբաղեցրած 0.00370հա մակերեսով հողատարածքը /կադաստրային ծածկագիր՝ 05-004-0022-0032/ ուղղակի վաճառքի կարգով իրեն օտարելու մասին, նկատի ունենալով, որ Սևան համայնք, ք. Սևան, Գ. Լուսավորչի փողոց թիվ 26 / 8 հասցեում գտնվող հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Օգտագործման իրավունքով Լիանա Մարգարյանին պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Գ. Լուսավորչի փողոց թիվ 26 / 8 հասցեում գտնվող ավտոտնակի զբաղեցրած 0.00370հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, 1քմ՝ 2887.5 դրամ վճարելու պայմանով օտարել Լիանա Ժորայի Մարգարյանին:
2. Սույն որոշումը ենթակա է հողի պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո:
3. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 03.01.2025թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2025 թվականի հունիսի 05
ք.Սևան